Հուսիկ Արա

Ներս

Ներսից է լինելու հաստատ փրկությունը,
որովհետև ներսից ենք փչացած
Թումանյան

Սպիտակ շապիկներ դրսից,
ներսը երազներ՝ անշփոթ իրական,
որ սպասում են դեռ:
Մակընթաց ալիք՝ սեր ու ջահել.
երկիրն է հոսում՝ սպիտակ սավան:

Չկա՛ վերադարձ,
կամուրջներն այրված են ետդարձի բոլոր,
նամակներ, որ չունեն հետադարձ հասցե,
և գնացքն է՝ միակողմանի տոմս:
Քա՛յլ արա՝ մերժիր քո մեջ չարը,
քա՛յլ արա՝ մերժիր քո նվաստը,
քա՛յլ արա՝ մերժիր մաղձը.
մի քայլ էլ՝ժխտիր ինքդ քեզ՝
նախընթաց ու վաղեմի:

Մնա՛ ալիքի կատարին՝
անունը հեղափոխություն,
որ միշտ էլ մրուր է թողնում ու տիղմ,

և դուրդն է մնում գինարբուքից հետո
բաժակներում:

Մեր ելքն է՝մուտք դեպի ներս: